**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»**
**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

**31 Հոկտեմբերի 2023, N 3 - 2**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԻԶՆԵՍ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով «Հայաստանի Հանրապետությունում «Տնտեսագիտություն և բիզնես վարչարարություն» ուղղությամբ համալսարան ունենալու հայեցակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ներկայացնելու մասին» հարցը՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում «Տնտեսագիտություն և բիզնես վարչարարություն» ուղղությամբ համալսարան ունենալու հայեցակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետությունում «Տնտեսագիտություն և բիզնես վարչարարություն» ուղղությամբ համալսարան ունենալու հայեցակարգը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Գիտական խորհրդի նախագահ՝** **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. հոկտեմբերի 31
Երևան

Հավելված
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2023 թվականի հոկտեմբերի 31-ի N 3 - 2 որոշման

**Հիմնավորում**

**Հայաստանի Հանրապետությունում «Տնտեսագիտություն և բիզնես վարչարարություն» ուղղությամբ համալսարան ունենալու**

Աշխարհի տարբեր երկրների բուհերի խոշորացման փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրա հիմնական նպատակը հաստատությունների արդյունավետության, կայունության (ինչպես ֆինանսական, այնպես էլ ինստիտուցիոնալ կարողությունների) և կրթության որակի բարձրացումն է: Իհարկե՝ բուհերի խոշորացման և կրթության որակի բարձրացման կապը միջնորդավորված է: Մասնավորապես, բուհերի խոշորացումը միավորված բուհերում հանգեցնում է մասշտաբի ընդլայնումից առաջացող տնտեսման էֆեկտի, որոշակի վարչակառավարչական ծախսերի կրճատման, ինչն էլ հնարավորություն է տալիս տնտեսված միջնոցները ծառայեցնել կարողությունների և ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի սպասարկմանը, բարձրորակ ակադեմիական կազմի ներգրավմանը և որակյալ հետազոտության իրականացմանը՝ դրանով իսկ նպաստելով խոշորացված բուհերի մրցունակության և կրթության որակի բարձրացմանը:

Այս առումով, ՀՀ-ում փոքր և ոչ բավարար ռեսուրսներ ունեցող բուհերի խոշորացման որդեգրված քաղաքականությունը միանգամայն հիմնավորված և արդարացված է:

«ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրով» ՀՀ-ում նախատեսվում է ունենալ մինչև 8 ուղղության բուհ: Ըստ նախնական քննարկումների՝ խոշորացված ուղղություններով բուհերը հետևյալն են.

1. Երևանի պետական համալսարան,
2. Բժշկական համալսարան,
3. Արվեստների համալսարան,
4. Տեխնոլոգիական համալսարան,
5. Կրթական համալսարան,
6. Սպայական համալսարան:

Պետք է նշել, որ միջազգային պրակտիկայում ըստ մասնագիտական ուղղությունների կամ պրոֆիլների բուհերի դիրքավորման (մասնագիտացման) մոտեցումն այնքան էլ կիրառական չէ և խոշորացման հետևանքով առաջացող բուհերը հիմնականում դասական բազմաոլորտ կառուցվածքով համալսարաններ են:

Այսպես՝ բուհերի գլոբալ վարկանշավորմամբ զբաղվող հեղինակավոր **QS** միջազգային կազմակերպության 2023 թ. վարկանիշում ներառված **1422** բուհերից **1188**-ը դիրքավորված են իբրև դասական (բազմապրոֆիլ) համալսարաններ, **175**-ը՝ տեխնոլոգիական բուհեր, **15**-ը՝ տնտեսագիտական կամ բիզնեսի վարչարարության բուհեր, **15**-ը՝ գյուղատնտեսական բուհեր, **11**-ը՝ բժշկական բուհեր, **11**-ը՝ բնական գիտությունների բուհեր, **5-ը** դիրքավորված են իբրև կրթական (մանկավարժական) բուհեր և ընդամենը **2**-ը՝ իբրև արվեստների և հումանիտար գիտությունների բուհեր[1]: Սա բնականաբար չի նշանակում, որ աշխարհում առկա են ընդամենը 15 տնտեսագիտական կամ 11 բժշկական, կամ 5 կրթական ու 2 արվեստների պրոֆիլային բուհեր: Սակայն QS-ի մեթոդաբանությամբ՝ իրենց կարողությունների և ճանաչման տանող գործոնների հաշվառմամբ, հարյուրավոր նման բուհերից այս

[1] https://www.topuniversities.com/university-rankings/world-university-rankings/2023

կազմակերպության կողմից հրապարակվող միջազգային վարկանիշում ներառված և միջազգայնորեն տեսանելի են պրոֆիլային ուղղության շեշտադրմամբ հենց այդ քանակությամբ բուհեր:

QS-ը վարում է նաև բուհերի առանձին վարկանիշ՝ ըստ բարձրագույն կրթության **5 խոշորացված առարկայական ուղղությունների** (Rankings by subject) իրականացվող կրթական ծրագրերի: Դրանք են՝

1. Արվեստ և հումանիտար գիտություններ,
2. Ճարտարագիտություն և տեխնոլոգիաներ,
3. Կյանքի գիտություններ և առողջապահություն,
4. Բնական գիտություններ,
5. Սոցիալական գիտություններ և մենեջմենթ:

«Արվեստ և հումանիտար գիտություններ» ուղղությամբ 521 բուհ ներառող հրապարակված վարկանիշում հենց այդ ուղղությամբ կրկին մասնագիտացած են ընդամենը 2-ը: Նմանատիպ կրթական ծրագրեր իրականացնող մնացյալ բուհերը կամ դասական համալսարաններ են կամ այլ պրոֆիլների բուհեր[2]:

«Ճարտարագիտություն և տեխնոլոգիաներ» ուղղությամբ 533 բուհ ներառող հրապարակված վարկանիշում 99-ը տեխնոլոգիական բուհեր են, 28-ը՝ բնական գիտությունների, 8-ը՝ պոլիտեխնիկական, 4-ը՝ ճարտարագիտական, իսկ մնացյալը կամ դասական համալսարաններ են կամ այլ պրոֆիլների բուհեր[3]:

«Կյանքի գիտություններ և առողջապահություն» ուղղությամբ 521 բուհ ներառող հրապարակված վարկանիշում 19-ը բժշկական բուհեր են, 1-ը՝ կյանքի գիտությունների, 30-ը՝ տեխնոլոգիական, իսկ մնացյալը դասական համալսարաններ են[4]:

[2] https://www.topuniversities.com/university-rankings/university-subject-rankings/2023/arts-humanities
[3] https://www.topuniversities.com/university-rankings/university-subject-rankings/2023/engineering-technology
[4] https://www.topuniversities.com/university-rankings/university-subject-rankings/2023/life-sciences-medicine

«Բնական գիտություններ» ուղղությամբ 520 բուհ ներառող հրապարակված վարկանիշում 99-ը կրկին տեխնոլոգիական բուհեր են, 30-ը՝ բնական գիտությունների, իսկ մնացյալը կամ դասական համալսարաններ են կամ այլ պրոֆիլների բուհեր[5]:

«Սոցիալական գիտություններ և մենեջմենթ» ուղղությամբ 535 բուհ ներառող հրապարակված վարկանիշում 32-ը տնտեսագիտական կամ մենեջմենթի բուհեր են, 38-ը՝ տեխնոլոգիական, իսկ մնացյալը դասական համալսարաններ են[6]:

Հատկանշական է, որ QS-ը, բացի համալսարանների **առարկայական ուղղությունների** վարկանիշից (Rankings by subject), հրապարակում է նաև «Բիզնես վարչարարություն» մասնագիտությամբ կրթական ծրագրեր իրականացնող բուհերի վարկանիշ (QS Global MBA Rankings)՝ հաշվի առնելով հատկապես միջազգային ուսանողների շրջանում սույն մասնագիտությամբ կրթություն ստանալու մեծ պահանջարկը՝ ի համեմատ այլ մասնագիտությունների: Սույն վարկանիշային աղյուսակում ներառված են 300 բուհերի բիզնես դպրոցներ և մենեջմենթի, բիզնես վարչարարության ուղղվածությամբ մասնագիտացված պրոֆիլային բուհեր[7]:

Գրեթե նույն պատկերն է նաև միջազգային բուհերի վարկանշավորմամբ մասնագիտացած մյուս կազմակերպության՝ **Times Higher Education-ի** 2023 թվականի վարկանիշային աղյուսակում[8] (World Wniversity Rankings-2023), որտեղ ներառված են աշխարհի 2345 համալսարաններ, որոնցից 1799-ը վարկանշային տեղ ունեն (ամենավերջին վարկանշային խումբը 1501+ կատեգորիան է), իսկ 546-ը ներառված են ցանկում, առանց վարկանիշային որևէ տեղի մատնանշման (իբրև

---

[5] https://www.topuniversities.com/university-rankings/university-subject-rankings/2023/natural-sciences
[6] https://www.topuniversities.com/university-rankings/university-subject-rankings/2023/social-sciences-management
[7] https://www.topuniversities.com/university-rankings/mba-rankings/global/2023?page=11
[8] Միակ բացառությունն այս վարկանիշում բժշկական բուհերի ավելի մեծաթիվ լինելն է QS-ի վարկանիշի համեմատ:

հաշվետվություն ներկայացնող բուհեր)[9]: Times Higher Education կազմակերպության World University Rankings 2023 թ. վարկանիշում ներառված և վարկանշային տեղ ունեցող **1799** բուհերից **1398**-ը դիրքավորված են իբրև դասական (բազմապրոֆիլ) համալսարաններ, **288**-ը՝ իբրև տեխնոլոգիական բուհեր (ներառյալ տեխնիկական գիտությունների, կիրառական և բնական գիտությունների և պոլիտեխնիկական բուհերը), 72-ը՝ իբրև բժշկական բուհեր (ներառյալ կյանքի գիտությունների և առողջապահական բուհերը), **19**-ը՝ իբրև տնտեսագիտական կամ մենեջմենթի բուհեր, **13**-ը՝ իբրև գյուղատնտեսական բուհեր, 8-ը դիրքավորված են իբրև կրթական (մանկավարժական) բուհեր և ընդամենը **2**-ը՝ կրկին իբրև արվեստների և հումանիտար գիտությունների բուհեր[10]: Հատկանշական է, որ սա նույնպես չի վկայում այն մասին, որ աշխարհում առկա են ընդամենը այդքան պրոֆիլային բուհեր: Ուղղակի THE-ի մեթոդաբանությամբ՝ իրենց կարողությունների և ճանաչման տանող գործոնների հաշվառմամբ, հարյուրավոր նման բուհերից այս կազմակերպության կողմից հրապարակվող միջազգային վարկանիշում ներառված և միջազգայնորեն տեսանելի են պրոֆիլային ուղղության շեշտադրմամբ հենց այդ քանակությամբ բուհեր:

Times Higher Education կազմակերպությունը ևս վարում է՝ ըստ բարձրագույն կրթության **խոշորացված առարկայական ուղղությունների վարկանիշ, որոնք ի տարբերություն QS-ի 5 ուղղությունների, արդեն 11-ն են՝**

1. Արվեստ և հումանիտար գիտություններ,
2. Համակարգչային գիտություններ,
3. Բիզնես և տնտեսագիտություն,
4. Ճարտարագիտություն,

[9] Թեպետ ընդհանուր վարկանիշում տեղ չունեն, սակայն վարկանիշային տեղեր ունեն ըստ առարկայական ուղղությունների հրապարակված վարկանիշերում:
[10] https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2023/world-ranking#!/length/-1/sort_by/rank/sort_order/asc/cols/stats:

5. Կրթություն,
6. Բժշկություն և առողջապահություն,
7. Իրավունք,
8. Կյանքի գիտություններ,
9. Սոցիալական գիտություններ,
10. Ֆիզիկական գիտություններ,
11. Հոգեբանություն:

«Արվեստ և հումանիտար գիտություններ» ուղղությամբ 663 բուհ ներառող հրապարակված վարկանիշում հենց այդ ուղղության շեշտադրմամբ կրկին մասնագիտացած են ընդամենը 2-ը: Մնացյալը կամ դասական համալսարաններ են կամ այլ պրոֆիլների բուհեր[11]:

«Համակարգչային գիտություններ» ուղղությամբ 974 բուհ ներառող հրապարակված վարկանիշում 170-ը տեխնոլոգիական բուհեր են, 6-ը՝ տնտեսագիտական, իսկ մնացյալը դասական համալսարաններ[12]:

«Ինժեներիա» ուղղությամբ 1306 բուհ ներառող հրապարակված վարկանիշում 239-ը կրկին տեխնոլոգիական բուհեր են, 7-ը՝ գյուղատնտեսական, 6-ը՝ տնտեսագիտական, 4-ը՝ բժշկական, իսկ մնացյալը դասական համալսարաններ[13]:

«Բիզնես և տնտեսագիտություն» ուղղությամբ 870 բուհ ներառող հրապարակված վարկանիշում 15-ը տնտեսագիտական, բիզնեսի և մենեջմենթի բուհեր են[14], 88-ը՝ տեխնոլոգիական, իսկ մնացյալը դասական համալսարաններ են:

«Կրթություն» ուղղությամբ 665 բուհ ներառող հրապարակված վարկանիշում 2-ը մանկավարժական բուհեր են, 42-ը տեխնոլոգիական, իսկ մնացյալը դասական համալսարաններ են[15]:

---
[11] https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2023/subject-ranking/arts-and-humanities?page=26
[12] https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2023/subject-ranking/computer-science?page=38
[13] https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2023/subject-ranking/engineering-and-it
[14] https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2023/subject-ranking/business-and-economics

«Բժշկություն և առողջապահություն» ուղղությամբ 1001 բուհ ներառող հրապարակված վարկանիշում 72-ը բժշկական համալսարաններ են, 67-ը՝ տեխնոլոգիական, իսկ մնացյալը դասական համալսարաններ են[16]:

Ըստ էության, միջազգային կրթական շուկայում նշանակալի հաջողություն և ճանաչում (միջազգային տեսանելիություն) ունեցող բուհերի դիրքավորման պրակտիկան փաստում է, որ դրանք կրթական ծառայությունների շուկայում հիմնականում դիրքավորվում են կա՛մ որպես դասական (այլ կերպ ասած բազմապրոֆիլ) համալսարաններ, կա՛մ որպես տեխնոլոգիական բուհեր (համալսարաններ և ինստիտուտներ)[17]:

Տվյալ դեպքում, ելնելով ՀՀ բարձրագույն կրթության ռազմավարության՝ միջազգային բուհերին համադրելի և միջազգային վարկանիշերի TOP 500-ում ներառված բուհեր ունենալու հայտարարված նպատակներից, Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության հայտարարված ուղղություններում ԵՊՀ-ն՝ իբրև դասական համալսարան, առանձնացնելը միանգամայն հասկանալի է, քանի որ ճանաչում ունեցող և վարկանիշերում ներառվող բուհերի շուրջ **84%**-ը դասական համալսարաններ են: Նույն կերպ՝ հասկանալի է նաև տեխնոլոգիական համալսարանի առկայությունը, քանի որ ճանաչում ունեցող և վարկանիշերում ներառվող բուհերի շուրջ **12%**-ը տեխնոլոգիական (նաև բնական գիտությունների ու պոլիտեխնիկական) համալսարաններ և ինստիտուտներ են: Մնացյալ ուղղությունների պարագայում (ինչպես իբրև ուղղություն ձևակերպված և հանրահռչակված, այնպես էլ չձևակերպված) ինչպես կողմ, այնպես էլ դեմ փաստարկները բավականաչափ են: Մանավորապես, ըստ այս պահին հասու

[15] https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2023/subject-ranking/education?page=26
[16] https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2023/subject-ranking/clinical-pre-clinical-health
[17] Իսկ Իրանի, Չինաստանի և Ճապոնիայի պարագայում նաև իբրև բժշկական համալսարաններ: Times Higher Education-2023 վարկանիշում ներառված բոլոր բժշկական համալսարանների շուրջ 60%-ը այս երկրների բուհերն են:

տեղեկությունների, «տնտեսագիտություն և բիզնես վարչարարություն» ուղղությունը նախատեսվում է կենտրոնացնել ԵՊՀ կազմում՝ որպես ավտոնոմ ինստիտուտ, թեպետ նույն այս ենթադրության համատեքստում «տնտեսագիտություն և բիզնես վարչարարություն» ուղղությունը կարող է իբրև ավտոնոմ ինստիտուտ ներառվել նաև տեխնոլոգիական համալսարանի կազմում (քանի որ բոլոր տեխնոլոգիական համալսարաններն էլ իրականացնում են տվյալ ոլորտի կրթական ծրագրեր):

Չնայած նրան, որ ոլորտային այլ բուհերի շարքում (բժշկական, կրթական, արվեստների և սպայական) «տնտեսագիտության և կառավարման» (կամ «բիզնես վարչարարության») ուղղությամբ մասնագիտացված բուհ չի նախանշվել[18], սակայն անհրաժեշտ է նշել, որ հետևելով ուղղությունների առանձնացման որդեգրած մոտեցմանը, բժշկական համալսարան ունենալու կարիք նույնպես չկա, քանի որ QS-ի և Times Higher Education-ի վարկանիշերում ներառված դասական համալսարանների և տեխնոլոգիական բուհերի ճնշող մեծամասնությունը իրականացնում են նաև բժշկական կրթական ծրագրեր[19], ընդ որում, ավելի առաջատար դիրքեր ունեն, քան հենց բժշկական բուհերը: Նույն տրամաբանությամբ վիճարկելի են նաև կրթական և արվեստների ուղղությունների կենտրոնացումը համապատասխան պրոֆիլային բուհերում, քանի որ այս բնագավառի կրթական ծրագրերը կարելի է ասել իրականացվում են բացառապես դասական համալսարանների կողմից:

***Վերոշարադրյալի համատեքստում տրամաբանական է դառնում խոշորացման ուղղությունների շարքում «Տնտեսագիտություն և բիզնես վարչարարություն» ավելացումը:***

**«Տնտեսագիտություն և բիզնես վարչարարություն»** ուղղությունն այսօր ՀՀ բուհերի դիմորդների շրջանում ամենապահանջված մասնագիտական ուղղություններից է:

---

[18] Թերևս որևէ բուհի կազմում բիզնես դպրոցի կարգավիճակով ուղղության ամրագրման համատեքստում:
[19] Ունեն բժշկական կամ առողջապահական դպրոցներ:

2021-2022 ուսումնական տարվա դրությամբ ՀՀ բարձրագույն կրթության առաջին աստիճանում (**բակալավր**) սովորող 68874 ուսանողներից **13353**-ը սովորել են բարձրագույն կրթության «տնտեսագիտություն»[20] և «գործարար վարչարարություն» մասնագիտություններով, ինչը կազմել է բոլոր սովորողների **19%**-ը: Այս մասնագիտություններով ընդունվել են **3271** ուսանողներ, ինչը կազմել է բոլոր ընդունվողների (17208) շուրջ **19%**-ը:

2022-2023 ուսումնական տարվա դրությամբ ՀՀ բարձրագույն կրթության առաջին աստիճանում (**բակալավր**) սովորող 71732 ուսանողներից **14641**-ը սովորել են բարձրագույն կրթության «տնտեսագիտություն» և «գործարար վարչարարություն» մասնագիտություններով, ինչը կազմել է բոլոր սովորողների **20%**-ը: Այս մասնագիտություններով ընդունվել են **3527** ուսանողներ, ինչը կազմել է բոլոր ընդունվողների (16536) շուրջ **21%**-ը[21]:

2021-2022 ուսումնական տարվա դրությամբ բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում (**մագիստրոս**) սովորող 9729 ուսանողներից **2700**-ը սովորել են բարձրագույն կրթության «տնտեսագիտություն»[22] և «գործարար վարչարարություն» մասնագիտություններով, ինչը կազմել է բոլոր սովորողների **28%**-ը: Այս մասնագիտություններով ընդունվել են **1280** ուսանողներ, ինչը կազմել է բոլոր ընդունվողների (4857) շուրջ **26%**-ը[23]:

---

[20] Ներառված է բարձրագույն կրթության **սոցիալական և վարքաբանական գիտություններ բնագավառում,** որը բացի տնտեսագիտությունից ներառում է նաև հետևյալ մասնագիտությունները՝ «Քաղաքագիտություն», «Հոգեբանություն», «Սոցիոլոգիա», «Մշակութաբանություն», «Միջազգային հարաբերություններ», «Ագրոէկոնոմիկա», «Եվրոպագիտություն» և «Հասարակայնության հետ կապեր»: **2017-2023 թթ** ընդունելության արդյունքները փաստում են, որ այս բնագավառի առաջատար մասնագիտությունը «Տնտեսագիտությունն է» (**ընդունվողների 25-30%-ը**), որին հաջորդում են «Հոգեբանություն» (**ընդունվողների 18-22%-ը**), «Միջազգային հարաբերություններ» (**ընդունվողների 14-18%-ը**), «Քաղաքագիտություն» (**ընդունվողների 8-12%-ը**) և «Հասարակայնության հետ կապեր» (**ընդունվողների 6-9%-ը**) մասնագիտությունները:

[21] Մանրամասն տե՛ս **N 1 հավելվածում:**

[22] Ներառված է սոցիալական և վարքաբանական գիտություններ խմբում:

[23] Մանրամասն տե՛ս **N 2 հավելվածում:**

2022-2023 ուսումնական տարվա դրությամբ բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում (**մագիստրոս**) սովորող 7781 ուսանողներից **1899**-ը սովորել են բարձրագույն կրթության «տնտեսագիտություն» և «գործարար վարչարարություն» մասնագիտություններով, ինչը կազմել է բոլոր սովորողների **25%**-ը: Այս մասնագիտություններով ընդունվել են **959** ուսանողներ, ինչը կազմել է բոլոր ընդունվողների (4063) շուրջ **24%**-ը[24]:

Հատկանշական է, որ 2022-2023 ուսումնական տարում նվազել են բոլոր մասնագիտությունների ընդունելության ցուցանիշները, ինչը պայմանավորված է եղել տվյալ ուսումնական տարում բակալավրի կրթական ծրագրի շրջանավարտների փոքրաթիվությամբ:




[24] Մանրամասն տե՛ս **N 2 հավելվածում:**




2015-2022 թթ. ՀՀ բարձրագույն կրթության առաջին աստիճանում (բակալավր) ընդունվողների և սովորողների միջինում **20%**-ը ընդունվել կամ սովորել են հենց «տնտեսագիտության և գործարար վարչարարության» մասնագիտություններով[25]: Ընդ որում, 2023 թ. վիճակագրության ընդգրկմամբ, այդ թիվը միջինում կազմում է ավելի քան 20%[26] կամ բակալավրի կրթական ծրագիր ընդունվողների և սովորողների 1/5-ը: Մասնավորապես՝ 2023-2024 ուսումնական տարվում առկա ուսուցման կրթաձևի ընդունելության 2 փուլերի արդյունքներով ՀՀ բուհեր ընդունված 10045 ուսանողներից 1891-ը կամ բոլորի 19%-ը ընդունվել են «տնտեսագիտության և գործարար վարչարարության» մասնագիտություններով: Ընդ որում, այս ուղղությամբ ընդունվողների 90%-ը (1701 ուսանող) ընդունվել են հենց առաջին փուլում, իսկ 10%-ը՝ թափուր տեղերի 2-րդ փուլի մրցույթի արդյունքում: Իսկ արդեն ՀՀ բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում (մագիստրոս) 2015-2022 թթ. ընդունվողների և

[25] Մանրամասն տե՛ս **N 3 հավելվածում:**

[26] ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած վիճակագրությունն ավարտվում է 2022-2023 ուսումնական տարով (2022 թ. ընդունելության արդյունքներով): 2023 թ. ընդունելության արդյունքներով այս մասնագիտությունների տեսակարար կշիռն էապես աճել է (անգամ միայն ՀՊՏՀ ՊՈԱԿ ընդունելության արդյունքների հաշվառմամբ):

սովորողների միջինում 26%-ը ընդունվել կամ սովորել են հենց «տնտեսագիտության և գործարար վարչարարության» մասնագիտություններով[27]:

Ընդհանուր առմամբ, 2015-2022 թթ. ՀՀ բարձրագույն կրթության երկու աստիճաններում (**բակալավր և մագիստրոս**) սովորողների և ընդունվողների շուրջ **20%-ը** բաժին է ընկնում «տնտեսագիտության և գործարար վարչարարության» մասնագիտություններին: Իսկ 2023 թ. վիճակագրության ընդգրկմամբ այդ թիվը միջինում կազմում է ավելի քան 23%:

Կարևոր է նշել, որ ի տարբերություն բարձրագույն կրթության մյուս առավել պահանջարկված ոլորտների (օրինակ՝ առողջապահության և իրավագիտության)՝ «տնտեսագիտության և գործարար վարչարարության», ինչպես նաև «ՏՀՏ», «կրթության» և «բնասիրական գիտությունների» մասնագիտություններով ընդունվողների և սովորողների ավելի քան 80%-ը նախապատվությունը տալիս են պետական բուհերին:

Մասնավորապես, եթե իրավագիտություն մասնագիտությամբ պետական բուհերի բակալավրի ծրագրում սովորել են տվյալ մասնագիտությամբ սովորողների շուրջ 57%-ը, իսկ առողջապահության ոլորտում՝ շուրջ 53%-ը, ապա «տնտեսագիտության և գործարար վարչարարության» մասնագիտությունների դեպքում պետական բուհերում սովորել են 80%-ը:

Նույն պատկերն է նաև մագիստրոսի կրթական ծրագրի պարագայում: «Տնտեսագիտության և գործարար վարչարարության» մասնագիտությունների դեպքում պետական բուհերում սովորել են բոլորի 90%-ը, իսկ իրավագիտություն և առողջապահական մասնագիտությունների գծով այս ցուցանիշը կազմել է համապատասխանաբար 77% և 79%:

[27] Մանրամասն տե՛ս **N 4 հավելվածում:**

Եվս մեկ կարևոր հանգամանք է այն, որ ի տարբերություն բարձրագույն կրթության այլ մասնագիտական բնագավառների՝ «տնտեսագիտության և գործարար վարչարարության» մասնագիտությունների դեպքում ավարտողներ-ընդունվողներ հարաբերակցությունը պրոֆիցիտային է, ինչը երկարաժամկետում ավելի լուրջ երաշխիքներ է պարունակում առ այն, որ այս մասնագիտություններով սովորողների տեսակարար կշիռը բոլոր սովորողների թվում գնալով մեծանալու է:

Ընդ որում, հատկանշական է, որ «տնտեսագիտության և գործարար վարչարարության» մասնագիտություններով ընդունվողների և սովորողների մեծ և հետևողականորեն աճող տեսակարար կշիռը ներհատուկ չէ բացառապես ՀՀ բուհական համակարգին. այն գլոբալ տրենդ է: ՏՀԶԿ բարձրագույն կրթության ոլորտի չափումները ևս փաստում են, որ ՀՀ ցուցանիշները մոտ են ինչպես ՏՀԶԿ, այնպես էլ G-20-ի երկրների բարձրագույն կրթության ոլորտի միտումներին[28]:

Կարևոր է նաև, որ բարձրագույն կրթության երկու աստիճաններում էլ բոլոր խոշորացված մասնագիտությունների թվում «գործարար վարչարարության» մասնագիտությունների և «տնտեսագիտություն» մասնագիտության առաջատար դիրքը պայմանավորված է այս մասնագիտությունների՝ աշխատաշուկայում առավել բարձր պահանջարկվածությամբ, ինչը փաստվում է ինչպես ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի, այնպես էլ մի շարք այլ կազմակերպությունների՝ աշխատաշուկայի մշտադիտարկումների և հետազոտությունների արդյունքներով:

[28]https://data.oecd.org/students/tertiary-graduates-by-field.htm?fbclid=IwAR2Qr9_lPtRs74yYzTD5hNqt2QwBWdcMb5CrR5mREjKoNiZhGHwx0kAc6HA#indicator-chart
Բարձրագույն կրթության 2020 թ. ՏՀԶԿ երկրների շրջանավարտների տեսակարար կշիռներն ըստ բարձրագույն կրթության բնագավառների տե՛ս **N 5 հավելվածում:**




Աղբյուրը՝ staff.am

**Staff.am** գործակալության իրականացված աշխատաշուկայի վերլուծության ամփոփ արդյունքներից պարզ է դառնում, որ ՀՀ աշխատաշուկայում ամենապահանջվածը «գործարար վարչարարության» և «տնտեսագիտություն» մասնագիտության կրողներն են (աշխատանքի առաջարկի շուրջ 46%-ը)[29]: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ staff.am-ի կողմից 2021 թ. հրապարակված համանման վերլուծության համեմատությամբ՝ 2022 թ. առաջին անգամ գրանցվել է ՏՏ ոլորտի աշխատանքների պահանջարկի նվազում, սակայն ի տարբերություն ՏՏ ոլորտի, զգալի աճ է գրանցել ֆինանսաբանկային ոլորտում աշխատանքի առաջարկը: Մասնավորապես՝ եթե նախորդ տարվա արդյունքներով բոլոր աշխատանքների 6.5%-ն էին կազմում նշված ոլորտի հաստիքները, ապա 2022 թ. այս ոլորտում

[29] Վաճառքի մասնագետները, մարքեթինգի և գովազդի մասնագետները, բանկային, վարկային գործի մասնագետները, հաշվապահները, նախագծերի կառավարիչները, ֆինանսական կառավարիչները, մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետները, գնումների և լոգիստիկայի մասնագետները, բիզնեսի կառավարիչները:

աշխատանքի առաջարկը գրանցել է 12.1% տեսակարար կշիռ, որը համարյա կրկնապատիկ մեծ է նախորդ հրապարակման արդյունքից: Նշենք, որ ֆինանսական ոլորտի մասնագիտությունները ներառված են ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության «Գործարարություն և վարչարարություն» մասնագիտությունների ցանկում. բացի այդ, դրան հաջորդող ամենապահանջված՝ չորրորդ և հինգերորդ հորիզոնականներում գտնվող մասնագիտությունները կրկին ընդգրկված են վերոնշված մասնագիտությունների ցանկում: Ըստ այդմ՝ պարզ է դառնում, որ ինչպես 2021 թ., այնպես էլ 2022 թ. ամենապահանջված 20 մասնագիտությունների շարքում առավել բարձր հորիզոնականներ են զբաղեցրել «Գործարարություն և վարչարարություն» մասնագիտությունների ցանկում ընդգրկված մասնագիտությունները:

Ընդ որում, գործարար վարչարարության մասնագիտությունների՝ աշխատաշուկայում մեծ պահանջարկը իր ազդեցությունն է թողնում նաև ուսանողների՝ աշխատաշուկայում արագ ինքնաիրացման հնարավորության վրա, ինչը բնականաբար մեծ ազդեցություն ունի ցանկացած կրթական ծրագրի ավարտից հետո դրա շրջանավարտների շրջանում դրական կամ բացասական արձագանքի ձևավորման վրա: Մասնավորապես՝ ՀՊՏՀ-ում 2021 թվականից ներդրված է փորձառությունը կրթական ծրագրի վերջնարդյունքներին համապատասխանող աշխատանքով փոխարինելու և աշխատատեղն իբրև փորձառության վայր դիտարկելու կառուցակարգ[30]: Կառուցակարգի ներդրումից հետո վարվող վիճակագրությունը փաստում է, որ բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսի

[30] Այսինքն՝ եթե «Շուկայագիտություն (մարքեթինգ) (ըստ ոլորտի)» կամ «Ֆինանսներ (ըստ ոլորտի)», կամ «Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» կրթական ծրագրերի 4-րդ կուրսի ուսանողները տվյալ պահին մասնավոր հատվածի ընկերություններում զբաղեցնում են իրենց մասնագիտությունների շրջանակում որևէ հաստիք (օրինակ՝ շուկայի զարգացման մասնագետ, SMM մասնագետ, գովազդային գործակալ, մարքեթոլոգ, կրտսեր հաշվապահ, հաշվապահ, վարկային մասնագետ, ավանդային մասնագետ, բանկային գործի մասնագետ և այլն), ապա նրանց թույլատրվում է իրենց փորձառությունն՝ ըստ փորձառության հաստատված ծրագրի իրականացնել հենց տվյալ կազմակերպություններում:

ուսանողների 55%-ը և մագիստրոսի կրթական ծրագրերի 2-րդ կուրսի ուսանողների 90%-ը ուսումնառության ավարտին արդեն իսկ աշխատում են իրենց մասնագիտությամբ:

Այս համատեքստում կարևոր ենք համարում նշել, որ ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության «Տնտեսագիտություն» և «Գործարարություն և վարչարարություն» մասնագիտությունների գծով կադրերի պատրաստման առումով առանցքային բուհը **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանն է**, որն ընդունելության և սովորողների ցուցանիշներով այս ոլորտի բացարձակ առաջատարն է:

Մասնավորապես՝ առկա կրթաձևով **«Տնտեսագիտություն»** մասնագիտությամբ ՀՊՏՀ և վերջինիս Գյումրու մասնաճյուղ յուրաքանչյուր ուսումնական տարի ընդունվում են 200 ուսանողներ, ՀԱՊՀ և մասնաճյուղեր՝ 100-190, ԵՊՀ և մասնաճյուղ՝ 65, այլ բուհեր՝ շուրջ 25: «**Կառավարում**» մասնագիտությամբ ՀՊՏՀ և դրա Գյումրու մասնաճյուղ յուրաքանչյուր ուսումնական տարի ընդունվում են 240 ուսանողներ, ԵՊՀ և մասնաճյուղ՝ 70, ՀԱՊՀ և մասնաճյուղեր՝ 40-50, Հայ-ռուսական համալսարան՝ 40, այլ բուհեր՝ շուրջ 45: «**Շուկայագիտություն**» մասնագիտությամբ ՀՊՏՀ և դրա Գյումրու մասնաճյուղ յուրաքանչյուր ուսումնական տարի ընդունվում են 170 ուսանողներ, այլ համալսարաններ այս կրթական ծրագիրը չեն իրականացնում: «**Հաշվապահական հաշվառում և հարկում**» մասնագիտությամբ ՀՊՏՀ և դրա Գյումրու մասնաճյուղ յուրաքանչյուր ուսումնական տարի ընդունվում են 220 ուսանողներ, այլ բուհեր՝ շուրջ 40: «**Ֆինանսներ**» մասնագիտությամբ ՀՊՏՀ-ում և դրա Գյումրու մասնաճյուղում յուրաքանչյուր ուսումնական տարի ընդունվում են 240 ուսանողներ, ՀԱՊՀ-ում և մասնաճյուղերում՝ 20-40, ԵՊՀ և մասնաճյուղեր՝ 100: Հայ-ռուսական համալսարան՝ 20-30, այլ բուհեր՝ շուրջ 50:

Ստացվում է, որ «Տնտեսագիտություն» և «Գործարարություն և վարչարարություն» մասնագիտությունների գծով ՀՊՏՀ և դրա Գյումրու մասնաճյուղ յուրաքանչյուր ուսումնական տարի ընդունվում են միջինում **1070** ուսանող, ԵՊՀ և մասնաճյուղ՝ **235**, ՀԱՊՀ և մասնաճյուղեր՝ **190-220**, այլ բուհեր՝ շուրջ **220-230**:

Միևնույն ժամանակ, 2023-2024 ուսումնական տարում «Տնտեսագիտություն» և «Գործարարություն և վարչարարություն» մասնագիտությունների գծով ընդունելության 57%-ը (1094 ուսանող) բաժին է ընկել ՀՊՏՀ-ին (ընդունելության 1-ին փուլով[31]), 11%-ը՝ ԵՊՀ-ին (ընդունելության 1-ին փուլով[32]), իսկ 32%-ը այլ բուհերին (ընդունելության 2 փուլերով)[33]:

Ընդ որում, ՀՊՏՀ առաջատար դիրքի մասին են փաստում ոչ միայն «Տնտեսագիտություն» և «Գործարարություն և վարչարարություն» մասնագիտությունների գծով ՀՀ բոլոր մյուս բուհերին միասին վերցրած **շուրջ 1,6 անգամ գերազանցող** ընդունելության ցուցանիշները, այլև ՀՀ բուհերի թվում ՀՊՏՀ ընդունելության տեսակարար կշիռն ու առկա կրթաձևի **TOP 10** ամենապահանջարկված մասնագիտությունների մեջ կայուն 5 մասնագիտություն ունենալու փաստը:

Մասնավորապես՝ 2023-2024 ուսումնական տարում ՀՀ-ում ամենապահանջված 10 մասնագիտություններից **5-ը**, 5 ամենապահանջվածից **3-ը**, իսկ 3 ամենապահանջվածից **2-ը** ՀՊՏՀ մասնագիտություններն են՝

1. ԵՊԲՀ Բուժական գործ՝ 662 դիմորդ,
2. ***ՀՊՏՀ Կառավարում՝ 327 դիմորդ,***
3. ***ՀՊՏՀ Ֆինանսներ՝ 325 դիմորդ,***
4. ԵՊՀ Իրավագիտություն՝ 303 դիմորդ,

[31] Թափուր տեղեր չեն եղել:
[32] Թափուր տեղեր չեն եղել:
[33] 22%-ը՝ 1-ին փուլով, իսկ 10%-ը՝ 2-րդ փուլով:

5. ***ՀՊՏՀ Տնտեսագիտություն՝ 276 դիմորդ***
6. ՃՇՀԱՀ Ճարտարապետություն՝ 270 դիմորդ,
7. ***ՀՊՏՀ Հաշվապահական հաշվառում՝ 267 դիմորդ,***
8. ԵՊԲՀ Ստոմատոլոգիա՝ 264 դիմորդ,
9. ***ՀՊՏՀ Շուկայագիտություն՝ 255 դիմորդ,***
10. ԵՊՀ Կիրառական մաթեմատիկա՝ 254 դիմորդ:

Ընդ որում, սա պատահական ձևավորված արդյունք չէ, այլ օրինաչափ երևույթ: Նույն կերպ՝ 2022-2023 ուսումնական տարում ՀՀ-ում ամենապահանջված 10 մասնագիտություններից 5-ը, 5 ամենապահանջվածից 2-ը և 3 ամենապահանջվածից 1-ը ՀՊՏՀ մասնագիտություններն են՝

1. ԵՊԲՀ Բուժական գործ՝ 671 դիմորդ,
2. ԵՊՀ Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա՝ 300 դիմորդ,
3. ***ՀՊՏՀ Կառավարում՝ 295 դիմորդ,***
4. ԵՊՀ Իրավագիտություն՝ 281 դիմորդ,
5. ***ՀՊՏՀ Ֆինանսներ՝ 276 դիմորդ,***
6. ԲՊՀ՝ Սերվիս՝ 244 դիմորդ,
7. ***ՀՊՏՀ Տնտեսագիտություն՝ 236 դիմորդ,***
8. ***ՀՊՏՀ Հաշվապահական հաշվառում՝ 236 դիմորդ,***
9. ՃՇՀԱՀ Ճարտարապետություն՝ 229 դիմորդ,
10. ***ՀՊՏՀ Շուկայագիտություն՝ 227 դիմորդ,***
11. ԵՊԲՀ Ստոմատոլոգիա՝ 225 դիմորդ:

Առհասարակ, սկսած 2020 թվականից, երբ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության գործընթացում ներդրվեց «մեկ բուհ մեկ մասնագիտություն» սկզբունքը և միևնույն մասնագիտության ընդունելության համար սահմանվեց քննությունների միասնականացված համակարգ,

«ՀՊՏՀ» ՊՈԱԿ-ը, շնորհիվ հենց «տնտեսագիտության և գործարար վարչարարության» բնագավառում մասնագիտացման և այդ բնագավառում որակյալ կրթական ծրագրեր իրականացնողի իմիջի՝ **ինչպես դիմորդների, այնպես էլ ընդունելության ցուցանիշներով ՀՀ 2-րդ բուհն է**՝ Երևանի պետական համալսարանից հետո: Մասնավորապես՝ 2023-2024 ուսումնական տարում ընդունելության 2 փուլերի արդյունքներով ՀՊՏՀ և դրա Գյումրու մասնաճյուղ են ընդունվել 1307 ուսանողներ կամ բոլոր ընդունված ուսանողների 13%-ը[34]: Հայտարարված կրթական տեղերի համալրվածության ցուցանիշը ՀՊՏՀ-ում կազմել է 99% (ՀՀ բոլոր բուհերի համալրվածության 55% միջին ցուցանիշի պայմաններում): ՀՊՏՀ-ն ընդունելության բացարձակ թվով և ընդունվողների մեջ ունեցած տեսակարար կշռով կրկին Հայաստանի Հանրապետության 2-րդ համալսարանն է: Նույն կերպ՝ կրթական տեղերի համալրվածության ցուցանիշով և թափուր տեղերում նվազագույն տեսակարար կշռով ՀՊՏՀ-ն կրկին Հայաստանի Հանրապետության 2-րդ համալսարանն է:

Ընդ որում, ինչպես Երևանի պետական համալսարանն ու Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանն են 2-րդ և 3-րդ տեղերում ՀՊՏՀ մասնագիտացման ուղղության մեջ, այնպես էլ ՀՊՏՀ-ն է նույն հորիզոնականներում՝ այս բուհերի ավանդական մասնագիտական ուղղություններում: Մասնավորապես՝ մաթեմատիկա և վիճակագրության ուղղության մեջ ՀՊՏՀ-ն զիջում է միայն Երևանի պետական համալսարանին, իսկ տեղեկատվական համակարգեր մասնագիտության բնագավառում՝ ԵՊՀ-ին և ՀԱՊՀ-ին:

ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում հայտարարվելիք բուհական ուղղությունների թվում «Տնտեսագիտություն և «Գործարարություն և վարչարարություն» ուղղության ներառման օգտին են ակնհայտորեն վկայում ինչպես

---

[34] 1182-ը ՀՊՏՀ և 125-ը ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ:

միջազգային վարկանիշերում տեղ զբաղեցնելու պոտենցիալ հնարավորությունը՝ ի համեմատ մի շարք այլ, արդեն հայտարարված, ուղղությունների, այնպես էլ ՀՀ աշխատաշուկայում այս ուղղությունների պահանջարկի գերակայությունն ու այս ուղղությամբ ՀՀ բուհեր ու մասնավորապես ՀՊՏՀ ընդունվողների ու սովորողների ցուցանիշների համեմատությունը այլ բուհերի և հայտարարվող ուղղությունների համանման ցուցանիշների հետ:

Այս պարագայում, օրինակ՝ եթե «Տնտեսագիտություն ու «Գործարարություն և վարչարարություն» ուղղությամբ այլ բուհերում իրականացվող կրթական ծրագրերը *(ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ, ՀԱՊՀ «տնտեսագիտություն» և «կառավարում» կրթական ծրագրերը, ՀԱԱՀ «ագրոբիզնես» կրթական ծրագիրը, ՀՀ ՊԿԱ-ն և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի «շուկայագիտություն», «կառավարում», «հանրային կառավարում», «գործարար վարչարարություն», «ֆինանսներ դրամաշրջանառություն և վարկ» և «մաքսային վարչարարություն» կրթական ծրագրերը*) համախմբվեն այս ուղղության պրոֆիլային բուհում՝ ՀՊՏՀ-ում, ապա այն, ինչպես դիմորդների, այնպես էլ սովորողների թվով կգերազանցի ՀՀ բոլոր պետական բուհերին՝ ներառյալ ԵՊՀ-ին:

Հակառակ դեպքում, եթե ՀՊՏՀ-ն իբրև ինքնավար բիզնես դպրոց միավորվի ՀՀ որևէ այլ բուհի (օրինակ՝ ԵՊՀ-ի կամ Տեխնոլոգիական համալսարանի հետ), ապա տվյալ միավորված բուհը կրթական ծառայությունների շուկայում այն աստիճան տիրապետող մրցակցային գերակայություն կստանա ՀՀ այլ բուհերի համեմատ, որ կառաջանան էական ռիսկեր մյուս միավորված բուհերի համալրման առումով: Մասնավորապես, եթե ՀՊՏՀ-ն բիզնես դպրոցի կարգավիճակով միավորվի ԵՊՀ-ին, որին բնականաբար պետք է միավորվեն նաև այլ բուհերի «տնտեսագիտության և գործարար վարչարարության» մասնագիտությունների կրթական ծրագրերը, ապա ԵՊՀ ուսանողների թիվը, ներկա թվի համեմատ, կկրկնապատկվի և 2-2,5 անգամ

կգերազանցի ՀՀ միավորված բուհերից չափով երկրորդ բուհին (ըստ ամենայնի՝ տեխնոլոգիական համալսարանին): Նույն կերպ, եթե ՀՊՏՀ-ն բիզնես դպրոցի կարգավիճակով միավորվի նոր ձևավորվող տեխնոլոգիական համալսարանին, որին բնականաբար պետք է միավորվեն նաև այլ բուհերի «տնտեսագիտության և գործարար վարչարարության» մասնագիտությունների կրթական ծրագրերը, ապա Տեխնոլոգիական համալսարանը ուսանողների թվով 2 անգամ կգերազանցի ԵՊՀ-ին: Ընդ որում, 2 դեպքերում էլ բիզնես դպրոցը՝ ուսանողների թվով, կգերազանցի և՛ ԵՊՀ-ի մյուս ֆակուլտետներին (միասին վերցրած), և՛ Տեխնոլոգիական համալսարանի մյուս ֆակուլտետներին (միասին վերցրած): Այս սցենարը խնդիրներ է առաջացնում ինչպես բուհական համակարգում 1 բուհի անհամեմատ մեծ մրցակցային առավելություններ ստանալու տեսանկյունից, այնպես էլ միավորված բուհում կառավարման արդյունավետության տեսանկյունից:

